# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

## ՀՐԱՄԱՆ

N 106 Ա «14» հունիս 2020թ.

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ 065 ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ ՊԱՇՏՊԱՆԱԾ ԱԻԴԱ ՏԻԳՐԱՆՅԱՆԻ ԹԵԿՆԱԾՈՒԱԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

***Ղեկավարվելով*** «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ «օրենք») 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ գլուխների պահանջներով,

***Ուսումնասիրելով*** Աիդա Տիգրանյանին մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան շնորհելու վերաբերյալ Մանկավարժության 065 մասնագիտական խորհրդի կայացրած որոշումը, որակավորման գործը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 10.06.2020թ.-ի թիվ 02-20 որոշումը, ապահովելով փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը, բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները

### ՊԱՐԶԵՑԻ

### I. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

1. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն որակավորման կոմիտեի (այսուհետ նաև՝ «ԲՈԿ») հասարակական գիտությունների բաժնի ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվել է, որ Աիդա Տիգրանյանի ատենախոսության մեջ առկա են այլ աղբյուրներից առանց համապատասխան հղումների օգտագործված հետևյալ նյութերը՝

1.1. Աիդա Տիգրանյանի «Շարունակական կրթության հիմնախնդիրը Հայաստանի կրթության համակարգում» վերտառությամբ ատենախոսության (այսուհետ նաև՝

«Ատենախոսություն») 78-րդ էջի նախավերջին պարբերության երկրորդ նախադասությունից մինչև 79-րդ էջի առաջին պարբերությունը փոխառված է Հավելված N 1 ՀՀ կառավարության 2012 թ. մարտի 15-ի նիստի N 10 արձանագրային որոշման ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ՝ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԾՐԱԳՐԻ 2-րդ էջի 4-րդ և 5-րդ կետերից:

1.2. Ատենախոսության 79-րդ էջը՝ «Ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգ» ենթաբաժնի 63 հղումից հետո՝ «Կրեդիտային» բառից սկսած մինչև 80-րդ էջի առաջին պարբերության ավարտը՝ նույն ԾՐԱԳՐԻ 3-րդ էջի 6-րդ կետի վերջին պարբերությունից:

1.3. Ատենախոսության 81-րդ էջի վերջում ընդգծված վերնագրից սկսած մինչև 83-րդ էջի առաջին պարբերության ավարտը՝ նույն ԾՐԱԳՐԻ 5-րդ էջի 5-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ կետերից:

1.4. Ատենախոսության 83-րդ էջի երկրորդ պարբերության սկզբից մինչև 84-րդ էջի առաջին պարբերության ավարտը՝ նույն ԾՐԱԳՐԻ 6-7-րդ էջերի 18-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ կետերից:

1.5. Ատենախոսության 83-րդ էջի երկրորդ պարբերության սկզբից մինչև 84-րդ էջի առաջին պարբերության ավարտը՝ նույն ԾՐԱԳՐԻ 13-րդ էջի 46-րդ կետից:

1.6. Ատենախոսության 86-րդ էջի 69 հղումից հետո սկսվող երրորդ պարբերությունից մինչև 90-րդ էջի ավարտը՝ նույն ԾՐԱԳՐԻ 14-17-րդ էջերի 47-րդ կետի 1) բ, ե, 3) ա, բ, 4) ա, բ, գ, 5) ա, բ, 6) ա, բ, գ, 7) ա, բ, 9) ա, բ ենթակետերից:

1.7. Ատենախոսության 102-րդ էջի երկրորդ նախադասությունից մինչև էջի ավարտը՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ /ընդունվել է Ազգային ժողովի կողմից 1999թ. ապրիլի 14-ին/ 3-րդ հոդվածից:

1.8. Ատենախոսության 35-րդ էջի առաջին պարբերությունը՝ Ս. Խաչատրյանի, Ս. Պետրոսյանի, Գ. Թերզյանի ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ձեռնարկի 9-րդ էջի ներածությունից:

1.9. Ատենախոսության 38-րդ էջը՝ նույն ձեռնարկի 9-րդ և 10-րդ էջերից:

1.10. Ատենախոսության 39-րդ էջից մինչև 42-րդ էջը՝ նույն ձեռնարկի 11-րդ էջից մինչև 14-րդ էջի ԳԼՈՒԽ 1-ի 1.1, 1.2 և 1.3 ենթաբաժիններից:

1.11. Ատենախոսության 43-րդ էջից մինչև 46-րդ էջը՝ նույն ձեռնարկի 18-րդ էջից մինչև 20-րդ էջի ԳԼՈՒԽ 1-ի 1.4 ենթաբաժնից:

1.12. Ատենախոսության 46-րդ էջից մինչև 56-րդ էջը՝ նույն ձեռնարկի 21-րդ էջից մինչև 56-րդ էջի ԳԼՈՒԽ 2-ի 2.1, 2.2, 2.3, 2.4, 2.5 և ԳԼՈՒԽ 3-ի 3.1, 3.2 ենթաբաժիններից:

2. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն որակավորման կոմիտեի նախագահի 13.03.2020թ.-ի թիվ 35-Ա հրամանով մերժվել է Աիդա Տիգրանյանին մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան շնորհելու վերաբերյալ 065 մասնագիտական խորհրդի կայացրած որոշումը:

3. ՀՀ քաղաքացի Աիդա Տիգրանյանը 2020թ.-ի մայիսի 13-ին վարչական բողոք է ներկայացրել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն՝ բարձրագույն որակավորման կոմիտեի նախագահի 13.03.2020 թվականի «Աիդա Տիգրանյանին գիտական աստիճան շնորհելու վերաբերյալ մանկավարժության 065 մասնագիտական խորհրդի որոշումը մերժելու մասին» թիվ 35-Ա հրամանն անվավեր ճանաչելու և գիտական աստիճանի վկայագիր տալու մասին որոշում կայացնելու վերաբերյալ:

4. Հիմք ընդունելով քաղաքացի Աիդա Տիգրանյանի կողմից 2020թվականի մայիսի 13-ին ներկայացված դիմումը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից 2020 թվականի մայիսի 13-ին հարուցվել է վարչական վարույթ:

5. Վարչական վարույթի արդյունքում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարը 10.06.2020թ.-ին կայացնում է թիվ 02-20 որոշումը «ՀՀ քաղաքացի Աիդա Տիգրանյանի՝ «ՀՀ քաղաքացի Աիդա Տիգրանյանի՝ «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն որակավորման կոմիտեի նախագահի 2020 թվականի մարտի 13-ի «Մանկավարժության 065 մասնագիտական խորհրդում պաշտպանած Աիդա Տիգրանյանի թեկնածուական ատենախոսության վերաբերյալ» թիվ 35-ա հրամանն անվավեր (ուժը կորցրած) ճանաչելու և գիտական աստիճանի վկայագիր տալու մասին որոշում կայացնելու վերաբերյալ վարչական բողոքով ներկայացված պահանջը մասնակի բավարարելու մասին» (այսուհետ նաև՝ «Որոշում»), որով մասնավորապես որոշում է՝

1. Մասնակի բավարարել ՀՀ քաղաքացի Աիդա Տիգրանյանի կողմից 2020 թվականի մայիսի 13-ին ներկայացված՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն որակավորման կոմիտեի նախագահի 13.03.2020

թվականի «Աիդա Տիգրանյանին գիտական աստիճան շնորհելու վերաբերյալ մանկավարժության 065 մասնագիտական խորհրդի որոշումը մերժելու մասին» թիվ 35-Ա հրամանն անվավեր ճանաչելու և գիտական աստիճանի վկայագիր տալու մասին որոշում կայացնելու վերաբերյալ վարչական բողոքով ներկայացված պահանջը և

1) Անվավեր (ուժը կորցրած) ճանաչել ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեի նախագահի՝ Մանկավարժության 065 մասնագիտական խորհրդում պաշտպանած Աիդա Տիգրանյանի թեկնածուական ատենախոսության վերաբերյալ 2020 թվականի մարտի 13-ի թիվ 35-Ա հրամանը,

2) Հանձնարարել ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեի նախագահին՝ ընդունել նոր վարչական ակտ՝ Մանկավարժության 065 մասնագիտական խորհրդում պաշտպանած Աիդա Տիգրանյանի թեկնածուական ատենախոսության վերաբերյալ:

## II. ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

Օրենքի 76-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *«Սույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերում, եթե համապատասխան բողոքը, սույն օրենքին համապատասխան, քննարկում է վարչական ակտն ընդունած վարչական մարմնի վերադաս վարչական մարմինը, ապա բողոքն ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարման ենթակա համարելու դեպքում վերադաս վարչական մարմինը կարող է ընդունել նշված մասերով նախատեսված որոշումներից որևէ մեկը կամ ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանել գրավոր վարչական ակտը և հանձնարարել վարչական ակտն ընդունած ստորադաս վարչական մարմնին՝ ընդունելու նոր վարչական ակտ կամ դադարեցնելու ոչ իրավաչափ գործողությունը կամ կատարելու հայցվող գործողությունը»*:

Տվյալ դեպքում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարը հանձնարարել է ԲՈԿ-ին ընդունելու նոր վարչական ակտ: Ընդ որում, Որոշմամբ տրված չէ նոր վարչական վարույթի համար շրջանակ, չի սահմանվել, հաստատվել որևէ փաստ, որը ԲՈԿ-ն անվերապահորեն պետք է հաշվի առներ նոր վարչական վարույթի ընթացքում, չի մատնանշվել, թե ԲՈԿ-ի որ գործողությունը, օրենքի մեկնաբանությունն է խախտում օրենսդրությունը: Դա նշանակում է, որ ԲՈԿ-ին հանձնարարվել է իրականացնել նոր վարչական վարույթ և այդ վարչական վարույթի շրջանակներում ամբողջությամբ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ուսումնասիրել վարչական վարույթի նյութերը: Բացի դրանից, չկա վերադաս վարչական մարմնի ընդունած որևէ ակտ, որը ԲՈԿ-ի՝ օրենքին նախկինում տրված որևէ մեկնաբանություն կճանաչի սխալ:

Այս նոր վարչական վարույթի շրջանակներում ԲՈԿ-ը պարտավոր է կիրառել իր

գործունեությունը կարգավորող բոլոր օրենսդրական ակտերը՝ առավել ևս, որ Որոշմամբ առկա չէ ԲՈԿ-ին օրենքի որոշակի ձևով մեկնաբանելու, որոշակի փաստ որոշակի ձևով գնահատելու հանձնարարական:

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները»*:

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 15.2 հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ *«Բարձրագույն որակավորման կոմիտեն՝ հաստատում և համապատասխան դիպլոմներով ամրագրում է գիտական աստիճանները՝ հիմք ընդունելով մասնագիտական խորհուրդների որոշումները և որակավորման գործի ուսումնասիրությունը»*:

Ըստ ՀՀ կառավարության 08.08.1997թ.-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» (այսուհետ նաև՝ «Կանոնակարգ») 30-րդ կետի՝ *«Դրական որոշման դեպքում խորհուրդը ԲՈԿ է ուղարկում որակավորման գործը, որն ընդգրկում է ատենախոսությունը, սեղմագիրը և խորհրդի աշխատանքի կանոնակարգով սահմանված փաստաթղթերը: Բացասական որոշման դեպքում խորհուրդն այդ մասին գրավոր հայտնում է ԲՈԿ-ին և հայցորդին է տալիս քաղվածք խորհրդի նիստի արձանագրությունից՝ գաղտնի քվեարկության արդյունքների մասին»*:

Ըստ Կանոնակարգի 31-րդ կետի՝ *«ԲՈԿ-ը ուսումնասիրում է որակավորման գործը և սույն կանոնակարգի 10-րդ, 11-րդ, ինչպես նաև 13-րդ կետերի պահանջներին անհամապատասխանություն հայտնաբերելու դեպքում մերժում է գիտական աստիճան շնորհելու մասին խորհրդի միջնորդությունը և մերժման մասին որոշումը ուղարկում է խորհուրդ»*:

Ըստ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի՝ *«Նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի*

*սկզբունքներից»*:

Մասնավորապես, Կանոնակարգի 11-րդ կետի համաձայն՝ *«Ատենախոսության մեջ հայցողը պարտավոր է նշել այն հեղինակներին և աղբյուրները, որոնցից նա փոխառել է առանձին դրույթներ կամ նյութեր»*:

Նշված նորմերի համակարգային ուսումնասիրությունից ակնհայտ է, որ գիտական աստիճան կարող է շնորհվել, եթե առկա է համապատասխան խորհրդի դրական որոշումը, և դրա հետ մեկտեղ ԲՈԿ-ի ուսումնասիրության արդյունքում չի հայտնաբերվել Կանոնակարգի 10-րդ, 11-րդ, ինչպես նաև 13-րդ կետերի խախտում: ԲՈԿ-ը գիտական աստիճան տրամադրում է երկու փաստի հիման վրա՝ 1. մասնագիտական խորհրդի որոշում, և 2. Որակավորման գործի ուսումնասիրություն: Այս երկու հիմքերի ուսումնասիրության և դրանց արդյունքում միաժամանակյա դրական կարծիքի առկայության դեպքում միայն ԲՈԿ-ը կարող է համապատասխան դիպլոմով հաստատել և ամրագրել գիտական աստիճանները:

ԲՈԿ-ի հասարակական գիտությունների բաժնի ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվել է, որ Աիդա Տիգրանյանի ատենախոսության մեջ առկա են այլ աղբյուրներից առանց համապատասխան հղումների օգտագործված հետևյալ նյութերը՝

1. Ատենախոսության 78-րդ էջի նախավերջին պարբերության երկրորդ նախադասությունից մինչև 79-րդ էջի առաջին պարբերությունը փոխառված է Հավելված N 1 ՀՀ կառավարության 2012 թ. մարտի 15-ի նիստի N 10 արձանագրային որոշման ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ՝ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԾՐԱԳՐԻ 2-րդ էջի 4-րդ և 5-րդ կետերից:

2. Ատենախոսության 79-րդ էջը՝ «Ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգ» ենթաբաժնի 63 հղումից հետո՝ «Կրեդիտային» բառից սկսած մինչև 80-րդ էջի առաջին պարբերության ավարտը՝ նույն ԾՐԱԳՐԻ 3-րդ էջի 6-րդ կետի վերջին պարբերությունից:

3. Ատենախոսության 81-րդ էջի վերջում ընդգծված վերնագրից սկսած մինչև 83-րդ էջի առաջին պարբերության ավարտը՝ նույն ԾՐԱԳՐԻ 5-րդ էջի 5-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ կետերից:

4. Ատենախոսության 83-րդ էջի երկրորդ պարբերության սկզբից մինչև 84-րդ էջի առաջին պարբերության ավարտը՝ նույն ԾՐԱԳՐԻ 6-7-րդ էջերի 18-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ կետերից:

5. Ատենախոսության 83-րդ էջի երկրորդ պարբերության սկզբից մինչև 84-րդ էջի առաջին պարբերության ավարտը՝ նույն ԾՐԱԳՐԻ 13-րդ էջի 46-րդ կետից:

6. Ատենախոսության 86-րդ էջի 69 հղումից հետո սկսվող երրորդ պարբերությունից մինչև 90-րդ էջի ավարտը՝ նույն ԾՐԱԳՐԻ 14-17-րդ էջերի 47-րդ կետի 1) բ, ե, 3) ա, բ, 4) ա, բ, գ, 5) ա, բ, 6) ա, բ, գ, 7) ա, բ, 9) ա, բ ենթակետերից:

7. Ատենախոսության 102-րդ էջի երկրորդ նախադասությունից մինչև էջի ավարտը՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ /ընդունվել է Ազգային ժողովի կողմից 1999թ. ապրիլի 14-ին/ 3-րդ հոդվածից:

8. Ատենախոսության 35-րդ էջի առաջին պարբերությունը՝ Ս. Խաչատրյանի, Ս. Պետրոսյանի, Գ. Թերզյանի ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ձեռնարկի 9-րդ էջի ներածությունից:

9. Ատենախոսության 38-րդ էջը՝ նույն ձեռնարկի 9-րդ և 10-րդ էջերից:

10. Ատենախոսության 39-րդ էջից մինչև 42-րդ էջը՝ նույն ձեռնարկի 11-րդ էջից մինչև 14-րդ էջի ԳԼՈՒԽ 1-ի 1.1, 1.2 և 1.3 ենթաբաժիններից:

11. Ատենախոսության 43-րդ էջից մինչև 46-րդ էջը՝ նույն ձեռնարկի 18-րդ էջից մինչև 20-րդ էջի ԳԼՈՒԽ 1-ի 1.4 ենթաբաժնից:

12. Ատենախոսության 46-րդ էջից մինչև 56-րդ էջը՝ նույն ձեռնարկի 21-րդ էջից մինչև 56-րդ էջի ԳԼՈՒԽ 2-ի 2.1, 2.2, 2.3, 2.4, 2.5 և ԳԼՈՒԽ 3-ի 3.1, 3.2 ենթաբաժիններից:

Հետևաբար, Աիդա Տիգրանյանի «Շարունակական կրթության հիմնախնդիրը Հայաստանի կրթության համակարգում» վերտառությամբ ատենախոսությունը չի համապատասխանում Կանոնակարգի 11-րդ կետին:

## III. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հիմք ընդունելով վերը շարադրվածը՝ ԲՈԿ-ի հասարակական գիտությունների բաժնի ուսումնասիրությունների արդյունքում Ատենախոսության մեջ այլ աղբյուրներից առանց համապատասխան հղումների օգտագործված նյութերի առկայության բացահայտումը, ինչը հանդիսանում է ՀՀ կառավարության 08.08.1997թ.-ի «Հայաստանի

Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 11-րդ կետի խախտում, ղեկավարվելով ՀՀ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ գլուխների, «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 15.2 հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, ՀՀ կառավարության 08.08.1997թ.-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 31-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Մերժել Աիդա Տիգրանյանին մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան շնորհելու վերաբերյալ 065 մասնագիտական խորհրդի 19.10.2018 թ-ի միջնորդությունը:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակիցների կողմից այն ստանալու օրվանից:
3. Սույն հրամանը կարող է երկամսյա ժամկետում՝ վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից բողոքարկվել վերադասության կամ դատական կարգով՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

Recoverable Signature

ՍՄԲԱՏ ԳՈԳՅԱՆ

Signed by: GOGYAN SMBAT 3303830386

ՍՄԲԱՏ ԳՈԳՅԱՆ